

**ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ**

Սույնով սահմանվում են Ինտեկրանկ ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») կողմից հաճախորդների դեպո հաշիվների բացման, սպասարկման, վարման, արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների դիմաց գանձվող սակագներն ու միջնորդավճարները (այսուհետ՝ «Սակագներ»):

Սույն Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես հաճախորդներին պատշաճ տեղեկացնելու պայմանով, այն է՝ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում փոփոխված սակագները տեղադրելը դրանք ուժի մեջ մտնելուց առնվազն 14 օր առաջ:

Սույն Սակագներով ուղղակիորեն չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով:

Առանձին դեպքերում, Բանկը, հիմք ընդունելով մի շարք գործոններ, կարող է սահմանել սույն Սակագներից տարբեր, ոչ ստանդարտ սակագներ առանձին հաճախորդների համար:

Սակագները չեն ներառում այլ կազմակերպությունների /առևտրային համակարգերի, բորսաների, դեպոզիտարիաների, պահառուների, ռեեստրավարների և այլն/ միջնորդավճարները:

Հաճախորդը պարտավոր է փոխհատուցել Բանկի կատարած ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են Հաճախորդի հանձնարարականի կատարման հետ:

Մատուցված ծառայությունների համար սույն Սակագներում նշված միջնորդավճարները Բանկն անակցեպտ գանձում է հաճախորդի բանկային հաշվից:

Միջնորդավճարի գանձման պահին հաճախորդի դրամային հաշվում անհրաժեշտ միջոցների բացակայության կամ անբավարար լինելու դեպքում Բանկը միջնորդավճարը գանձում է հաճախորդի արտարժույթային հաշվից՝ գանձման պահին Բանկում գործող արտարժույթի առքի փոխարժեքով:

1. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ

1. 1. ՀՀ պետական պարտատոմսերի դեպո հաշիվների բացում, փակում	500 ՀՀ դրամ
1. 2. Դեպո հաշիվների սպասարկում	Անվճար
1. 3. Արժեթղթերի ներպահանջության փոխանցումներ	Անվճար
1. 4. Արժեթղթերի միջպահանջության փոխանցումներ	1,000 ՀՀ դրամ
1. 5. Արժեթղթերի փոխանցում Բանկի հետ կնքված գործարքի արդյունքում	անվճար
1. 6. Արժեթղթերի արգելադրում և գրավադրում, առևտրային արգելադրում, դադարեցում	անվճար
1. 7. Արժեթղթերի դիմաց եկամուտների հաշվարկում, հաշվեգրում	անվճար
1. 8. Դեպո հաշվի քաղվածքի և այլ տեղեկանքների տրամադրում	անվճար

2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

2. 1. ՀՀ պետական արժեթղթերի շուկա	
1. մինչև 100 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0,05% նվազագույնը 6,000 ՀՀ դրամ+ԱԱՀ
2. 100 մլն դրամ և ավելի	գործարքի գումարի 0,03% +ԱԱՀ
2. 2. Կորպորատիվ պարտատոմսերի շուկա, բացառությամբ Ինեկոբանկ ՓԲԸ կողմից թողարկված	
1. մինչև 100 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.07%, նվազագույնը 6,000 ՀՀ դրամ+ԱԱՀ
2. 100 մլն դրամ և ավելի	գործարքի գումարի 0.05% +ԱԱՀ
2. 3. Կորպորատիվ բաժնետոմսերի շուկա	պայմանագրային
2. 4. Ինեկոբանկ ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսեր	գործարքի գումարի 0.01% նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 15,000 ՀՀ դրամ +ԱԱՀ